Տասնմեկերորդ թողարկում

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի պարտատոմսերի տասնմեկերորդ թողարկման հիմնական պայմանները.	
Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Արժեթղթերի ձևը	Ոչ փաստաթղթային
Մեկ արժեթղի անվանական արժեքը	25 ԱՄՆ դոլար
Արժեթղթերի քանակը	40 000 հատ
Մեկ թողարկման ընդհանուր ծավալ	1 000 000 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամուտ (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք)	Տարեկան 7,00%, որը կհաշվարկվի սկսած տեղաբաշխման ավարտի օրվան հաջորդող օրվանից
Արժեկտրոնային եկամուտների վճարում	Եռամսյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	36 ամիս
Տեղաբաշխման ժամկետ	06/06/2016թ.-17/06/2016թ.
Տեղեկացնում ենք, որ պարտատոմսերի թողարկման ազդագիրը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 25/05/2016թ.:	
Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռք բերել 06/06/2016թ.-ից մինչև 17/06/2016թ.-ը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի Գլխավոր գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ ցուցակումից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում, մասնավորապես «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի առևտրային հարթակում:	
Պարտատոմսերը ձեռք բերելու համար անհրաժեշտ է անձնական հաշիվներ բացել “Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա” ԲԲԸ –ի կողմից հաշվի օպերատորի կարգավիճակ ստացած ընկերություններում և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ–ում կամ ՀՀ տարածքում գործող ցանկացած բանկում: Կատարելով ներդրում կորպորատիվ պարտատոմսերում՝ Դուք կարող եք շրջանառության ընթացքում ցանկացած պահի դրանք վաճառելիս ետ ստանալ ոչ միայն ներդրված գումարը, այլ նաև կուտակված տոկոսները:	
“Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին” ՀՀ օրենքի համաձայն, Բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են “Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի” կողմից:	
Պարտատոմսերի մարման ամսաթիվ՝ 18.06.2019թ.	

Ծանուցում.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի տասնմեկերորդ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը և պարտատոմսերի մարումը կիրականացվի հետևյալ ժամանակացույցով	
Արժեկտրոնային եկամուտների առաջին վճարում	18.09.2016թ.
Արժեկտրոնային եկամուտների երկրորդ վճարում	18.12.2016թ.
Արժեկտրոնային եկամուտների երրորդ վճարում	18.03.2017թ.
Արժեկտրոնային եկամուտների չորրորդ	՝ 18.06.2017թ.

վճարում	
Արժեկտրոնային եկամուտների հինգերորդ վճարում	18.09.2017թ.
Արժեկտրոնային եկամուտների վեցերորդ վճարում	18.12.2017թ.
Արժեկտրոնային եկամուտների յոթերորդ վճարում	18.03.2018թ.
Արժեկտրոնային եկամուտների ութերորդ վճարում	18.06.2018թ.
Արժեկտրոնային եկամուտների իններորդ վճարում	18.09.2018թ.
Արժեկտրոնային եկամուտների տասներորդ վճարում	18.12.2018թ.
Արժեկտրոնային եկամուտների տասնմեկերորդ վճարում	18.03.2019թ.
Արժեկտրոնային եկամուտների տասներկուերորդ վճարում	18.06.2019թ.
Այն դեպքում, երբ արժեկտրոնային եկամուտների վճարման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, վճարումը կատարվում է հաջորդ աշխատանքային օրը:	
Արժեկտրոնային եկամտի վճարման, ինչպես նաև մարման գումարի փոխանցումը կատարվելու է ՀԿԴ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքում նշված հաճախորդի հաշվին՝ պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման, ինչպես նաև մարման օրվա մինչև ժամը 14:00-ն: Արժեկտրոնային եկամուտը, ինչպես նաև մարման գումարը վճարվում են վճարման օրվանը նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում, պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում կամ այլ բանկերում պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին:	
Պարտատոմսերի և Բանկի մասին առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ Պարտատոմսերի թողարկման **ազդագրում**, որը 25.05.16թ.-ին գրանցվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից:	